

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը մասնակցեց Պարույր Սևակի ծննդյան 90-ամյակին նվիրված միջոցառմանը

01.02.2014



Մարզային գրադարանի կողմից կազմակերպված «Ոչ թե հետք, այլ՝ ներկայություն» խորագրով գրական-գեղարվեստական ցերեկույթն սկսվեց Երևան-Էրեբունի երգի կատարումով: Միջոցառմանը ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Ադասի Հովհաննիսյանը, ծնողներ, մանկավարժներ, աշակերտներ:

Մարզպետի տեղակալը հուշեր պատմեց Պ. Սևակի կյանքից: Այնուհետև գրադարանավար Կ. Ալեքսանյանը ներկայացրեց Պարույր Սևակի կյանքն ու գրական գործունեությունը: Սևակի ստեղծագործությունների կատարմամբ հանդես եկան Արփի համայնքի դպրոցի ասմունքողները: Միջոցառման ընթացքում ցուցադրվեց Պարույր Սևակին նվիրված տեսանյութ: Հնչեց նաև Սևակի կենդանի ձայնը՝ «Վարք Մեծաց» բանաստեղծությամբ:

Մանկական բաժնի վարիչ Ջ. Մարգարյանը ներկայացրեց Սևակին որպես մանկագիր, իսկ դպրոցական երեխաներն արտասանեցին գրողի մանկական բանաստեղծություններից: Ցերեկույթն ավարտվեց Կարեն Բաբաջանյանի հեղինակած «Քիչ ենք, բայց հայ են» երգով, որին արձագանքեց ողջ հանդիսատեսը: Միջոցառման ավարտին գրադարանի տնօրեն Ռ. Լևոնյանը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին և մասնակիցներին: